Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 4/24-135 04.03 2025թ.

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Արմեն Դիլանյանին

Հարգելի՛ պարոն Դիլանյան,

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Գնորդ) և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2024թ. նոյեմբերի 18-ին կնքվել է ՆՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր): Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը և առաջնորդվելով Պայմանագրի 8.15-րդ կետով՝ 2-րդ չափաբաժնի վիդեոբրոնխոսկոպի համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 2024թ. դեկտեմբերին 17-ին երկկողմ հաստատվել է Պայմանագրի N1 համաձայնագիրը: Համաձայն որի վիդեոբրոնխոսկոպի մատակարարումը Վաճառողի կողմից պետք է իրականացվեր սույն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 60 օրացուցային օր:

Պայմանագրի 1.1 կետով սահմանվում է, որ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք):

Հարկ է նշել, որ սահմանված ժամկետում Վաճառողը չի մատակարարել Պայմանագրի N1 համաձայնագրով նախատեսված Ապրանքը և համաձայն Պայմանգրի 2.1.7 կետի Գնորդը կարող է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետով Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության խոշորագույն և բազմապրոֆիլ մանկական բժշկական հաստատություն, որտեղ մատուցվում են բարձրորակ բժշկական ծառայություններ՝ Երևան քաղաքի և մարզային բնակչության համար: Բժշկական կենտրոնը տարեկան սպասարկում է մոտավորապես 50.000 պացիենտների, որոնցից 700-900 երեխաներ կարիք են ունենում անհետաձգելի բրոնխոսկոպիկ միջամտության:

Հաշվի առնելով, որ բրոնխոսկոպիկ ծառայությունը դասվում է անհետաձգելի բուժօգնության ծառայությունների ցանկին, հետևաբար «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարելը՝ Ապրանքը չմատակարարելը, ստեղծել է երեխաների կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում հրատապ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու անհնարինության ռիսկ, ինչը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ կենտրոնում բուժվող երեխաների և նորածինների կյանքերը փրկելու առաքելության վրա:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և Պայմանագրի 8.11-րդ կետը «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...», առաջարկվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 1,380,000.00 /մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 920000 /ինը հարյուր քսան հազար / ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ**

Կատարող՝ Ա.Խաչատրյան
Գնումների բաժին
Հեռ. 010 30 30 10 /4/